Այսպէս, «Միմընգ Մոպայլ», որ անթիւ հեռաձայններու արտադրութեան թիւ մէկ ընկերութիւնը կը հանդիսանայ Եւրոպայի մէջ, կը հաւատայ, թէ մօտիկ ապագային օր մը կարելի պիտի ըլլայ ձեր բլիթային հեռաձայնն ու սովորական հեռաձայնը փոխնիփոխ օգտագործել, բլիթային հեռաձայնով պարզ հեռաձայնի թիւը օգտագործել, եւ հակառակը՝ հեռաձայնի միջոցով տեղեկակ ըլլալ, թէ ձեր ե-նամակտուութիւն մէջ անոր ե-նամակ մը կայ եւ հեռաձայնին հրահանգել, որ ձեր ստացած պատգամները ինք կարդայ...

Այս բոլորը օգին մէջ շինուած պալատներ չեն: Արդէն բազմաթիւ անթիւ հեռաձայններ կրնան պատգամներ ուղարկել զէպի այլ հեռաձայններու պատասխանները, ճիշդ այնպէս՝ ինչպէս բլիթային հեռաձայններով կարելի է «էս. էմ. էս» ուղարկել: Մասնազէտներու համաձայն, քանի մը տարիէն կարելի պիտի ըլլայ նաեւ հեռաձայններու միջոցով կատեսողական բնոյթի ֆայլեր ուղարկել եւ ստանալ:

Հաւանաբար նկատած չէք հեռաձայնի սարքերուն արձանագրած յառաջիկայը, որովհետեւ մարդիկ 5-6 տարին անգամ մը հազիւ թէ նոր հեռաձայնով մը փոխարինեն սենեակին մէկ անկիւնը բազմած թիւով սարքը: մինչ բլիթային հեռաձայններ կը փոխուին կօշիկ եւ հագուստ փոխելու յաճախականութեամբ, տրուած ըլլալով, որ անոնք մեր մնալուն ընկերակիցներն են եւ անոնց արդիական եւ գերփոք ըլլալը գործնականութենէ աւելի վարկի հարց է...


Յամենայնդէպս, հեռաձայնը տակաւին իր վերջին խօսքը չէ ըսած, եւ յաջորդ անգամ, երբ շուկայ երթաք նոր հեռաձայն մը գնելու, պիտի գիտնաք, որ ան «դեռ կենդանի է»...

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒԱԾ ԿԱՅՔ

Արամ Խաչատուրեանի ծննդեան 100ամեակի տօնակատարութիւններ, որոնք տեղի կ'ունենան աշխարհի տարածքին, նոր սլացք կուտան աշխարհահռչակ արւեստագէտի փառքին եւ առիթ կը հանդիսանան մերթ թերազնահատուած այս հանճարեղ մարդուն վաստակը վերարժեւորելու:

Արամ Խաչատուրեան իր արժանաւոր տեղը գրաւած է 20րդ դարու մեծագոյն երաժիշտներու շարքին եւ մեծ ժողովրդականութիւն կը վայելէ յատկապէս նախկին Խորհրդային Միութեան տարածքին: Այս իմաստով, զարմանալի չէ, որ անոր 100ամեակի տօնակատարութիւններու բազումը տեղի ունեցաւ Մոսկուայի մէջ՝ ներկայութեամբ նախագահներ վլատիմիր Փուտինի եւ Ռուսիոյ Քոչարեանի:

Արամ Խաչատուրեանի 100ամեակին նուիրուած www.armeniadiaspora.com/events/aram100/ հասցեով կայքը առանձին



բաժիններ տրամադրած է անոր կենսագրութեան, երաժշտական ստեղծագործութիւններու ամբողջական ներկայացումին եւ լուսանկարներուն: Շուտով կայքին վրայ պիտի աւելնան նաեւ Խաչատուրեանի կարգ մը ստեղծագործութիւններուն «էմ. Փի. 3» ֆայլերը:

«ԱՌԻԹԼՈՒՔ ԷՔՍՓՐԷՍ»ԷՆ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆՍ ՕԳՏՈՒԵԼՈՒ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Ե - նամակներ ուղարկելու եւ ստանալու գործողութիւնը դարձած է մեքենայական՝ ճաշելու եւ կօշիկի կապերը կապելու նման: Ե - նամակներու փոխանակման ծրագիրներ մենք յաճախ կը գործածենք առանց իսկ մտածելու, թէ ե - նամակ գրելու կամ կարդալու կարելիութիւններէն զատ այլ օգտակար բաներ կ'ա՞ն, զորս ծրագիրը կրնայ չնորհել մեզի: Ստորեւ կը ներկայացնենք «Առեթուք էքսփրէս» ծրագրի ընձեռած կարելիութիւններէն փունջ մը, որոնք անպայմանօրէն կրնան օգտակար դառնալ շարժուող արտադրութեան ամէնէն արագ միջոցներէն մէկը՝ նամակը կանոնաւորապէս օգտագործողին:


1) Ե - նամակներ ուղարկելու եւ ստանալու գործողութիւնը դարձած է մեքենայական՝ ճաշելու եւ կօշիկի կապերը կապելու նման: Ե - նամակներու փոխանակման ծրագիրներ մենք յաճախ կը գործածենք առանց իսկ մտածելու, թէ ե - նամակ գրելու կամ կարդալու կարելիութիւններէն զատ այլ օգտակար բաներ կ'ա՞ն, զորս ծրագիրը կրնայ չնորհել մեզի: Ստորեւ կը ներկայացնենք «Առեթուք էքսփրէս» ծրագրի ընձեռած կարելիութիւններէն փունջ մը, որոնք անպայմանօրէն կրնան օգտակար դառնալ շարժուող արտադրութեան ամէնէն արագ միջոցներէն մէկը՝ նամակը կանոնաւորապէս օգտագործողին:

2) Եթէ կ'ուզէք ձեր ե - նամակատու փոխ (ի-ն-պոքս) պարունակած ե - նամակներուն մէջ տուեալ բառ մը փնտռել «բիւ» ընել «Edit», ապա «Find», եւ այնուհետեւ «message» յայտնուող տուեալներէն մէջ արձանագրել որեւէ բառ եւ գործի յծել ծրագրիը...

3) Եթէ կը պահէք ձեր ստացած ե - նամակներուն մեծ մասը, գործնական քայլ մըն է, նոր ֆոլտըրներու ստեղծումը: Այսպէս, կարելի է, օրինակ «գործընկերներ» ֆոլտըր մը ստեղծել եւ անոր մէջ արձանագրել գործընկերներէն ստացած ձեր ե - նամակները: նոր ֆոլտըր մը

6) Եթէ կ'ուզէք, որ «առեթուք էքսփրէս»-ի հասցեագիրքին մէջ (address book) մեքենայաբար աւելցուին ձեր բարեկամներուն ե - նամակի հասցեները «options»-ի «send» բաժինին մէջ ընտրել «automatically put people I reply to in my address book»:

7) Ձեր ե - նամակատու փրձածկագիրով մը (password) պաշտպանելու համար «Manage Identities»-ի «Properties» բաժինին մէջ ընտրել «require a password», ապա ճշդել ձեր «Առեթուք էքսփրէս» գալն գործածողին կ'ընձե-



լուք էքսփրէս»-ի սերվըրին ուղարկելու համար «local folder» ալթըրնի վրայ, ապա «new folder» ընել «իւնպոքս»-ին վրայ եւ ընտրել «new folder»: Ապա անուն մը տալ նոր ֆոլտըրին եւ ձեր որեւէ ե - նամակը «բաշել» զէպի այդ ֆոլտըրը:

4) Կարելի է ձեր «Ուէպ-մէյլ»ը ստուգել նաեւ «Առեթուք էքսփրէս»-ին միջոցով, եթէ անշուշտ ունիք «հոթմէյլ» ե - նամակի հասցե մը (www.hotmail.com): Այս կարելիութիւնը օգտագործելու համար կրնաք «հոթմէյլ»-ի ձեր հասցեն աւելցնել «Առեթ-

ԵՐԿՕՐԵԱՅ ԲԱՑԱՌԻԿ ԵՐԶԱՊՏՈՅ 14 ԵՎ 15 ՅՈՒՆԻՍԻՆ

Թարթուս, Պանդաս, Առուտի կղզին նաւակով, Լաքաքի քաղաքը եւ շուկան, Գիշերը Քեսապ, պանդոկ նախաձայնով եւ ըմբիթով: Գին՝ միայն 45\$:

Մեկ շաբաթ Միմընգ, պանդոկ, նախաձայնով: Գին՝ 499\$:

Մեկ շաբաթ նաւով Կիպրոս եւ Յունաստան՝ կղզիներ 485\$, լման ձաշերով, ամեն օր մը խախախտ:

15 - 29 Օգոստոս ԵՐԵՎԱՆ, ՍԵԱՆ - Ծաղկաձոր լման պտղոցներ վիզաճերով եւ տուրքերով միայն 625\$-ն սկսեալ փոխան 1100\$:


Արձանագրութեան համար դիմել ԱՃԵՆԱԿ ԹՈՒՐԳ: Հեռ. 01 - 261177, 01 - 240654 եւ 03 - 233978:

ԱՐՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՆՆԵՐ

«ԼՈՒԿԻԹԷՔ ՔՈՒԻՒՔ-ՔԷՄ ՔՈՐՏԼԸՍ»

Համացանցի միջոցով սփռուածներ կատարող վիտեօ-բամբերները (ուէպրէմ) այնքան հին են, որքան նոյնիքն համացանցը, սակայն անոնք չկրցան արդարացրնել իրենց վրայ գրուած յոյսերը եւ մինչեւ այսօր շարք մը գփուարուութիւններ կը շարունակեն պատճառ դառնալ, որ այս սարքերը, ի տարբերութիւն տպիչին եւ քլեքրին, հեռու ըլլան առանին ելեկտրոնային սարքերու հաւաքածոներու անբաժանելի մէկ մասնիկը դառնալ:

Անոնց ժողովրդականութեան պակասը մասամբ առնչուած է յաճախ համացանցի դանդաղութեան հետ, որ արգելք կը հանդիսանայ լատեսողական լայնածաւալ ֆայլերու փոխանակման: Սակայն, նոյնիսկ երբ ենթական այս գփուարուութիւնները չի դիմագրաւեր, ուէպրէմներուն առնչուող այլ հարցեր կը յամենան: Այսպէս, օրինակ ուէպրէմներու գործնականութիւնը սահմանափակող երեւոյթներէն մէկը անոր թիւն է: Համակարգիչին կապուած կարճ քէլպրով մը ուէպրէմը շարժումի փոքր տրամադի մը ունի: Բնականաբար այս



մէկը բոլորովին անյարկի է վիտեօ - բամբերայի հասկացողութեան, քանի՞ ժապաւէն տեսած էք, որ ամբողջութեամբ պատկերահանուած է նոյն սենեակին մէջ...

«Լուկիթէք» ընկերութեան «Գուրու-Քէմ Քորտըս» սարքը այս իմաստով յեղաշրտում կը հանդիսանայ: Անթիւ հաղորդակցութեամբ արձանագրութիւնը համակարգիչին ուղարկող այս ուէպրէմին շնորհիւ կարելի է տան սենեակները շրջելով կատարել վիտեօ արձանագրութիւններ, որոնք կ'ուղարկուին համակարգիչին եւ հոնկէ ուղարկուին կը սփռուին համացանցին միջոցով: Այսպիսով կարելի կը դառնայ ընտանեկան հաւաքոյթներ եւ հանդիպումներ արձանագրել, մինչ նախապէս լաւագոյնը, որ կարելի էր ընել ուէպրէմով մը, անոր դիմաց կանգնելով կապուածներ կատարելն էր...

Այս ուէպրէմին արձանագրած պատկերներուն որակը բարձր է: Կարելի է ընտրել 160x120, 320x240 եւ 640x480 խտութիւններուն միջեւ:

Սարքը կ'արժէ շուրջ 300 տոլար: Անոր մասին յաւելեալ տեղեկութիւններ կարելի է գտնել www.logitech.com հասցեով կայքին մէջ:

Պատրաստեց՝ ԽԱՉԻԿ ՍՈՒՐԱՏԵԱՆ

www.lemagan.com

www.hamazkayin.com

Մանկապատանեկան

50 ՏԱՐԻՆԵՐ ԱՌԱՋ

ԷՎԵՐԷՍԹԻ ՆՈՒԱՃՈՒՄԸ

29 Մայիս 1953ին Էտմընտ Հիլզրի եւ Թեմզիսկի Նորկեյ առաջին երկու անձերն էին, որոնք հասան աշխարհի ամենց բարձր գագաթը՝ Էվերեսթ, մագլցելով 8850 մետր:



առանձինն յառաջանալով աւելի քան 8500 մետր բարձրութեան վրայ՝ երկու մարդիկը կը հասնին գագաթ 29 Մայիս 1953ին, կէսօրուան շուրջ, դիմադրութեան հետք չկարողացող տասնեակ մը մետր հարթ տարածութիւն մը: Պատմութեան համար

ՎՏԱՆԳԱՒՈՐ ԱՐՇԱՒԱՆՔ ՄԸ

8000 մետր մագլցելով վտանգաւոր, գրեթէ անտանելի պայմաններու կ'ենթարկէ մարդկային մարմինը: Այդ բարձունքին վրայ թթուածինի քանակը շատ կը պակսի, երեւոյթ մը, որ կրնայ փճացնել մեր գործարանները եւ անոնց աշխատանքը դադարեցնել քանի մը վայրկեանէն:

Գլխաւոր վնասուողը կ'ըլլայ ուղեղը, որ մեծ քանակով թթուածինի պէտք ունի աշխատելու համար: Այս ձեւով անկրնայ պատրանքներ եւ սիւսլ գոգացողութիւններ յառաջացնել, որոնք կրնան լեռնագնացին կողմնորոշուելու կարողութիւնը կորսնցնել: Հետեւաբար անոնք կրնան կորսուիլ կամ որոշել իրենց վերելքը շարունակել փոթորիկին ընդմէջէն:

Այդ բարձունքին վրայ նաեւ սիրտը եւ թոքերը մեծ ճիգեր կը թափեն: Սիրտը երկու անգամ աւելի արագ կը զարնէ, քան ծովուն մակարդակին վրայ, նոյնիսկ երբ լեռնագնացը հանգիստ վիճակի մէջ է: Աչքերը կը տեսնեն շատ հզօր արեւու ճառագայթներուն տակ: Ցուրտին աստիճանը կրնայ կրկնապատկուիլ շատ զօրաւոր եւ յանկարծակի փոթորիկներուն ընթացքին:

Սակայն լեռնագնացին ամէնէն մեծ թշնամին կրնայ ըլլալ... անոր հպարտութիւնը: Օրինակ՝ շատ քիչեր կ'ուզեն էվերեսթը նուաճելու գաղափարէն հրաժարիլ, երբ յանկարծակի փոթորիկ մը գրեթէ կը կեցնէ գագաթէն քանի մը մետր ցած...


20րդ դարու սկիզբը, հիւսիսային եւ հարաւային բեւեռները նուաճելէ ետք, էվերեսթը կը մնար մոլորակին միակ մարդկային ոտք չկոխուած շրջանը:

1921 թուականին անգլիական հետազոտական խումբ մը առաջին անգամ ըլլալով կ'ուղղուի դէպի էվերեսթ, Հիմալայեան լեռնաշղթայի գագաթներէն մէկը, որ կը գտնուի Թիպէթի եւ Նեփալի միջեւ: Անոնց ղեկավարն ապտակը յատկապէս մագլցելու շարժար ճամբաներ գտնելն ու այս վերելքին վտանգները չափելն էր:

3 տարիներ ետք 2 անգ-





լիացի լեռնագնացներ կ'անհետանան գագաթին մօտերը: Կարգ մը անձեր կը նկատեն, թէ անոնք են էվերեսթի գագաթի իսկական առաջին երկու նուաճողները: Դժբախտաբար անոնցմէ ետք մօտաւորապէս 200 հոգի պիտի մահանայ մէկ տարուան ընթացքին՝ փորձելով այդ երազը իրականացնել:



1953ի անգլիական հետազոտական արշաւի խումբը կ'ընդգրկէ աւելի քան 300 հոգի, տասնեակ թոնրով ապրանք, եւ շատ խիստ կազմակերպուած ու թիւն: Այս խումբին պաշտօնն է մինչեւ գագաթ հասնել երկու անձեր՝ նոր գելանտաւոր շիւթերի եւ անոր նէփալի շերփան' (առաջնորդը) թեւեղիկ նորկէյ:

Ամբողջ գիշեր մը

ԻՆՉՈՒՄԵՐ ՍՏԱՄՈՔՍԸ ՉԱՅՆ ԿԸ ՀԱՆԷ, ԵՐԲ ԱՆՕԹԻ ԸԼԼԱՆՔ



Երբ մենք երկար ժամանակ կերած չենք ըլլար, մեր ստամոքսին մէջ ուտելիք չի մնար, որովհետեւ ամէն ինչ մարսուած կ'ըլլայ: Հետեւաբար պարսպ ստամոքսը կազմով կը լեցուի:

Ստամոքսին աշխատանքը մեր կլլած ուտելիքները չմարսելն է: Երբ այլեւս մարսելիք ուտելիք չի մնար, ստամոքսը կազմով կը մարսէ՝ եւ այս ձեւով կը յառաջանան տարօրինակ ձայներ:

ԱՅԼԱԶԱՆ

Ռուսական անըրպետագնացութեան գործակալութիւնը կ'ուզէ հաճոյք պատճառել դրոշմաթուղթ հաւաքողներուն: 20 հազար տոյար վճարելով՝ այս վերջինները կրնան ստանալ Միջազգային Անըրպետագնացութեան կեդրոնէն ուղարկուած յատուկ դրոշմաթուղթով նամակ մը:

Խրուած Չաղրէպ քաղաքին մէջ գրականութեան սիրահար ուսուցիչ մը թաղուած է իր գրադարանէն թափած գիրքերուն տակը: Ան փրկուած է 3 օր ետք՝ յոգնած եւ ծարաւ:

Անգլիոյ մայրաքաղաք Լոնտոնի մէջ «Սանի Տրիթ» կոչուած կով մը ստացած է ամէնէն լաւ կաթ տուող կովու մետալը: Մէկ օրուան ընթացքին ան կ'արտադրէ 3 անգամ աւելի կաթ, քան՝ ուրիշ կովեր:

Դարձեալ Անգլիոյ մէջ գողեր փորձած են գողնալ աւուուազն մէկ թեւատ Հանսթանթրի կենդանաբանական պարտէզին մէջ՝ պարտէզին վեց թեւատներուն վրայ քարեր նետելով: Անոնցմէ ոչ մէկը վիրաւորուած է, սակայն անոնք ապրած են նեղացուցիչ վայրկեաններ:

Թոքիոյն հարիւր քիլոմետր դէպի արեւմուտք գտնուող Ցուրուի պոլստայական տաճարներէն մէկուն մէջ կ'ապրի իւրայատուկ «վանական» մը: Ան լապրատոր տեսակի շուն մըն է եւ կը կոչուի Փուրին: Երբ տարիէ ի վեր ան կ'ընկերակցի իր տիրոջ՝ Թայտո Սաթոյի, Հոքիոյ տաճարին մէջ: Ան բնաւ չի մոռնար հազնիլ վանականի իր ուրարը՝ աղօթքներէն առաջ:

Քանարեան կղզեխումբի եօթը կղզիներէն մէկուն մէջ (Հոմբրա), միայն թռչուններ չեն երգեր: Դասարանին մէջ աշակերտները իրենց ուսուցչուհիին բարի լոյս կ'ըսեն սուլելով: 15րդ դարէն ի վեր կղզիին բնակիչները այս միջոցը կը գործածեն հաղորդակցելու համար: Եւ որպէսզի այս սիւլօ կոչուած լեզուն չկորսուի, ան երբ տարիէ ի վեր կը դասաւանդուի կղզիին բոլոր նախակրթարաններուն մէջ:

Քուպայի մայրաքաղաք Հաւանայի մէջ դպրոցները ուսուցիչներու պակաս ունին: Ի՞նչ ընել: Կառավարութիւնը գտած է իւրայատուկ լուծում մը: Ան հաւաքած է 16-18 տարեկան 500 պատանիներ՝ նախակրթարանի դասարաններուն մէջ դասաւանդելու համար: Անոնք վեց ամսուան ընթացքին «պիտի սորվին» իրենց արհեստը՝ կարող ուսուցիչներու ձեռամբ, ապա իրենց կարգին պիտի դասաւանդեն՝ իրենց անձնական ուսումը շարունակելով:


ՆԵՐԿԷ




Ժ Ա Մ Ա Ն Յ



Կետերը իրարու միացուր 1էն 42՝ գտնելու համար պահուած պատկերը:



Կրնա՞ս օգնել զբօսաշրջիկներուն՝ գտնելու համար չիմական տաճարին հասցնող ճամբան:



Թռուցիկներն ո՞ր մէկը տեր չունի:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

«ԱԶԳԱԿ»-Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԳԻՏԵՒՈՐ, ԹԵ...

8000Ի ԵՐԿԻՐԸ՝ ՆԵՓԱԼ

Հնդկաստանի եւ Չինաստանի միջեւ գտնուող Նեփալ իր սահմաններուն մէջ ունի 8000 մետր բարձրութեամբ անցնող 8-14 գագաթներ: Ասիական այս պոպուլյար գաղափարները արշաւներու երբ օրնուցներու վրայ պտոյտներու աշխարհի մայրաքաղաքն է:

Նեփալը ունի սքանչելի բնութիւնը ունի շրջապատը: Եւ վաղորդակ ընակուած անտառներ եւ աշխարհի ամէնէն բարձր գագաթները... Նեփալ ունի մօտաւորապէս 25 միլիոն բնակիչ: Անոնք կը բաժնուին մօտաւորապէս քսան ցեղախումբերու վրայ, որոնցմէ ամէնէն նշանաւորը շերփաներուն ցեղախումբն է: Այս լեռնարանակները դարձած են դէպի էվերեսթ արշաւներու մեծ մասին պաշտօնական առաջնորդները:

Նեփալի կառավարութիւնը կը քաջալիրէ լեռնագնացութիւնը եւ արշաւները իր հողերուն վրայ, որովհետեւ զրօսաշրջութիւնը մեծ գումարներ կ'ապահովէ երկրին տնտեսութեան: Սակայն ասիական բաւարար չէ: Նեփալը աշխարհի ամէնէն աղքատ երկիրներէն մէկն է. բազմաթիւ գիւղեր ո՛չ ջուր, ո՛չ ալ լեկտրականութիւն ունին: Աւելին՝ տար տարիէ ի վեր, թագաւորին բանակին եւ շատ ծայրայեղ ապստամբներու խումբին միջեւ պատերազմը երկիրը կը քանդէ:

ՀԱՍՏԱՉԱՅԻՆ «Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ

ՀԱՅՐԵՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Հովանավորութեամբ՝
ՏԻԿԻՆ ԼԻՄԻ ԹԻԹԻՒՆՃԵԱՆԻ

Յուցահանդէսին բացումը տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 11 Յունիս 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Աղբալեան - Շ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրի «Սարգիս Սարգիսեան» սրահին մէջ:

ՇՐԱԲԵՐ

ԵՍՆՕԹ.- Յուցահանդէսը պիտի շարունակուի մինչև Ուրբաթ, 13 Յունիս 2003:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑԻՆ

Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինները կը ստանան օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տուար:

Սառա Պոյաճեանի մահուան Բ. տարելիցին առիթով՝

- Տը Եւ տիկին Ժաք Պոյաճեան
- Տը Եւ տիկին Ժան Զոփուրեան
- Տը Եւ տիկին Էմին Հատտատ

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուքի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,35 - 32,45 լ.ն.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ն.
Քուէյթեան տինար	5032,00 - 5057,00 լ.ն.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ն.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ն.
Ա.Մ. Էմիրութեանց տիրիամ	410,75 - 412,75 լ.ն.
Քաթարեան դիալ	413,75 - 415,75 լ.ն.
Սէուական դիալ	402,00 - 404,00 լ.ն.
Օմանեան դիալ	3895,00 - 3920,00 լ.ն.
Եգիպտական կինէ	249,00 - 259,00 լ.ն.
Անգլիական սթրէրին	2508,00 - 2518,00 լ.ն.
Զուիցերիական ֆրանք	1152,00 - 1157,00 լ.ն.
Թրքական լիրա	104,00 - 104,50 լ.ն.
Կիպրական փաուստ	3015,00 - 3040,00 լ.ն.
Ճափոնական հապար եէն	12,70 - 12,80 լ.ն.
Ափրիկեան հապար ֆրանք	13,25 - 13,30 լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ն.
Քանադական տոլար	1113,00 - 1118,00 լ.ն.
Աւստրալիական տոլար	995,00 - 1000,00 լ.ն.
Եւրօ	1780,00 - 1790,00 լ.ն.

• ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	142,000 - 147,000 լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	127,500 - 132,500 լ.ն.
Օմանեան մէկ ոսկի	118,000 - 123,000 լ.ն.
Մեքսիկական փէստս	678,000 - 698,000 լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,685,000 - 17,885,000 լ.ն.
Մէկ օնս ոսկի	367,00 - 367,50 \$
Մէկ օնս արծաթ	4,50 - 4,52 \$

• Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1806 - 1.1813
Քանադական տոլար	1.3515 - 1.3525
Ջուիցերիական ֆրանք	1.3076 - 1.3086
Ճափոնական եէն	117.93 - 118.03
Մէկ սթրէրլին	1.6649 - 1.6659
Մէկ դոլար	560 դրամ

• ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԾՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. Ըշդում Գիճի Բ. Ըշդում	
Ա. կարգ	4 6/8 4 7/8
Բ. կարգ	5 5

ԼՈՒՄԱՑՈՒՄ ԱԼԵԶԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

• Տը Եւ տիկին Յակոբ Գարագալիքեան Ռոմինա Թիմոնեանի մահուան առիթով, ԲԱԿԻ Ծերանցին 50,000 լ. ո.:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒՍԻՆ ԱՊՏԱԼԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԱՌԱ ՊՈՅԱՃԵԱՆԻ մահուան Բ. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅՈԿՍԷՓ ԱԾՃԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Ժուճիէի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՐԻ ԳԱԶԱՆՃԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Ժուճիէի Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5455
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

1. Մարգարածաղիկ:	1. Փայլ - Նիհար:
2. Մնգոյր - Երաստան, նստատեղի:	2. Գոյատեւէ - Հայաստանի դետերէն:
3. Պատ - Առողջանութեան նշաններէն:	3. Թառամիլ - Քրիստոս Հոնըր դիմի վերածննդ:
4. Արգարեւ, ստուգիչ - Հրանիւթ:	4. 100 մ2 - Պոլսահայ մեծատուն - Կրկնուած տուն:
5. Ստացական դերանուն - Պաշտպանութիւն:	5. Դարձեալ - Նախամայր:
6. Արական օտար անուն - խորք:	6. Ամուսինը կորսնցուցած կին - Ունկնդրութեան սրահ:
7. Արտայայտումի կերպ - Չորարքէլի որդին - Ուրուական:	7. Ուղղեալ - Սփիւռքահայ երգիչ:
8. Վաղանցուկ, կարճատեւ:	8. Եւրոպական երկիր - Ալբանիէն:
9. Իրաքեան լրատու գործակալութիւն - Սկաուտ - Ժամանց:	9. Նկուն, ամօթահար:
10. Յրանսական քաղաք - Ձի - Ցուցական անկար:	10. Չայնական գիրք - Իգական անուն:
11. Ս. Գրային մարգարէ - Արար իշխան:	11. Բեւեռաքաղ - Ժանտանու կենդանի:

ԹԻԻ 5454

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Պ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն	Վ
2	Պ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն	Վ
3	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն	Վ	Ա
4	Վ	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն	Վ	Ա
5	Ո	Ջ	Ո	Ր	Ի	Մ	Ա	Շ		
6	Ե	Մ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն
7	Ե	Մ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն
8	Ն	Ի	Մ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ
9	Ի	Մ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն
10	Մ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն	Վ
11	Մ	Ա	Ն	Ր	Ա	Ն	Ի	Թ	Ն	Վ

★ **Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ** ★

★ **ԽՈՑ** (21 Մարտին 20 Ապրիլ)

Եթէ գլխապոյտ ունիք ու անհանգիստ կը զգաք, առանց տնտնալու գացեք բժիշկի՝ բնուելու. քերես ձեր կենսանիւթերը (վիրամիւն) պակաս են: Ձեր առողջութեան հսկեցեք:

★ **ՑՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս)

Ձաւակ ու ծնողք պիտի չգտնուիք հասկացողութեան միտնոյն գիծին վրայ: Ուրեմն, վէճի նիւթ արծարծելէ խուսաբեցեք: Կիրակին տրամադրեցեք պոյոյտի:

★ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)

Եթէ ձեր հարգանքներէն մէկը արտասահման կը գտնուի, պիտի տխրի հեռու մնացած ըլլալուն պատճառով: Ան կ'ապրի ընտանիքին կարօտով: Հեռաձայնեցեք իրեն:

★ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)

Ձեզի կը բաւէ միայն մէկ խօսք ըսել՝ փարատելու համար քիւրիմացուքիւն մը հարգատի մը կամ բարեկամի մը հետ: Ուրեմն, դեռ ի՞նչ կը սպասեք:

★ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Միայնք կ'ընէք առանց մտածելու, անիմաստ կերպով: Հապե՛նք մտածելով կատարուած այս ծախսերը կը վնասեն ձեր քակիւն: Ուրեմն, երկու վայրկեան կանգ առեք, ապա դարձեալ կ'ընէք ձեր խօսքը ու շոյալ կերպով մտխոյր:

★ **ԿՈՑ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Մտեր կը բաշխուին ձեզի հետ խօսելէ, հարցում մը ուղղելէ: Ի՞նչ ըրած էք արդեօք այս մարդոց, որ կը վախճան ձեզմէ: Ի՞նչ մը փափկանկատ եղէք:

★ **ԿՇԻՌ-Ք** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Այսօր հեւընտ աշխատանք տարած էք, վազվզած էք հոս ու հոն՝ գրեթէ ապարդիւն կերպով: Յաջող անգամ պէտք է ծրագրուած ճամբայ ելլէք, որպէսզի կանոնաւոր ընթացման ձեր աշխատանքները եւ արդիւնքի մը հասնիք:

★ **ԿՐԻՏ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Ձեր ընտանեկան քե ընկերային կենցաղին մէջ փոխադարձ յարգանքի գացումով վարուեցեք, որպէսզի աւելի յարգուիք ու սիրուիք: Կենցաղագէտ եղէք:

★ **ԱՆԵՂՆԱՒՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Եթէ առեւտուրով կը զբաղիք, կամ՝ շինարարական մարզի մէջ, համբերատարութեամբ վարուեցեք ձեր յանձնարարներուն, մանաւանդ՝ բժախիդիրներուն հետ: Ուրեմն, խաղաղ մնացեք:

★ **ԱՅԾԵՂՋԻՒՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Եթէ օդանաւային ճամբորդութիւն մը պիտի կատարէք այսօր, ուշադիր եղէք, որ բան մը չմոռնաք, որովհետեւ օդակայանէն ետ դառնալը անիմաստ պիտի ըլլալ:

★ **ԾՈՎԱՆՈՅԸ** (21 Յունուարէն 19 Փետրուար)

Պիտի չկարեւոր դիմանալ օրուան ստեղծած բազմատեսակ փորձութիւններուն: Այս պատճառով խնդիր պիտի ունենաք ձեր կնոջ կամ ամուսնոյն հետ, մասնաւորաբար՝ դրամական միտումի պատճառով: Ուրեմն, զպակեցեք ձեր ախորժակը...


★ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)

Այսօր խկապէս օրը չէ կռիւ փնտռելու ձեր ընկերոջ, ընկերուհիին կամ նշանածին հետ: Ան կրնայ ձեզի տալ վերջնագիր մը, գոր չէք կրնար քեթեւի առնել: Այս անգամ՝ ան շատ յուրջ է իր վերաբերմամբ մէջ: Ձգու՛շ եղէք:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՎԱՍՏՈՆ / ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ / ՉՔՈՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՉԵՏԵՂՄԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՆՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՄԸ՝ ՄՈՒՆԻՐԱ ՍՈԼՀԻ «150 ՈՒԱԹՅ»Ը



Լուսանկարչական փորձառու կը յաջողեն, համակարգիչի պատասխանները ստանալով կը տոնանք Վրայ կը տոնանք քանապատեղծութիւններու տողեր, որոնք առնչութիւն ունին ցուցահանդէսին ու անոր մթնոլորտին հետ:

Լուսար ձերմակութեամբ յատկանշաւոր այս ցուցահանդէսին համար օգտագործուած են նաեւ ժուճի իրարու կը յաջողեն, համակարգիչի պատասխանները ստանալով կը տոնանք քանապատեղծութիւններու տողեր, որոնք առնչութիւն ունին ցուցահանդէսին ու անոր մթնոլորտին հետ:

«150 ուաթ» ցուցահանդէսով երիտասարդ արուեստագէտ Մունիրա Սոլի կը պատմէ իր սեփական աշխարհին պատմութիւնը, որուն մէջ իրենց արեւցելուն կը հրաշիրին ցուցահանդէսին այցելուները:

«150 ուաթ» ցուցահանդէսը կը շարունակուի մինչեւ 13 Յունիս:

ԱՅՍՈՐ

Երգահանդէս. Մորին Օ՛Տէյ (սոփրանօ) եւ Էոնեսք Շամմա (թենոր), ժամը 20:00ին, Պալամանտի համալսարանին մէջ:

Հաւաքական ցուցահանդէս՝ «Աֆքարթ», «Աստիասիոն տը Պէյրուք փուր լը տելեֆոնման սոսիալ» կեդրոնին մէջ, մինչեւ 8 Յունիս:

Նկարչական ցուցահանդէս՝ «Թեք Վիուգ», «Էսփաս Էս. Տե.» ցուցարան, մինչեւ 28 Յունիս:

Կապոնական մշակութային շաբաթ, ժամը 18:00ին, Սէն Ժոզեֆ համալսարանի «Փիեռ Ապու Խաբեր» սրահին մէջ:

Թատրոն «Սոլօ», ժամը 20:30ին, «Մատինե» բառարան, մինչեւ 21 Յունիս:

Ցուցահանդէս՝ «Թու գ'արքիսթ», Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ, մինչեւ 13 Յունիս:

Գորգերու ցուցահանդէս՝ «Թափի տիւ Գորգա», «Սըրսոք» բանաբանին մէջ, մինչեւ 12 Յունիս:

Ջետիման արուեստի ցուցահանդէս՝ «Էքրան մեկանժ», Միշէլ Թաուրիի յարգարումի արուեստի գործերը, «Էսփաս Էս. Տե.» ցուցարան, մինչեւ 7 Յունիս:

ՕՐԵՆԻՈՅ

ՇԱԲԱԹ, 7 ՅՈՒՆԻՍ 2003

ՊԵՅՐՈՒԹ

ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՅԵՐԵՎ՝ 31°C

ԳԻՇԵՐ՝ 22°C

ԽՈՆԱՌԻԹԻՒՆ՝ 53%

ԱԶԳԱԿ 50 ՏԵՄԲԵՒ ԿՈՒՆԵՂ

7 Յունիս 1953

ՅԻՐ ՈՒ ՑԱՆ ՀԱՅԵՐ

Պենիքական Բոնկոյի «Յառաջ» թատերախումբի Թատրոնի Տարվանդեան հետեւեալ տեղեկութիւնները կը փոխանցէ:

Համարանով հայեր կան պենիքական Բոնկոյի մէջ: Յրուած են զանազան քաղաքներու մէջ: Անցնիկ տը Բոնկոյ կը բնակի Պուրաուի մէջ: Օրանտա Ռուսիի Ուզուն Պուրա քաղաքին մէջ միայն մեր ընտանիքը՝ Տերվեղեան (գարամուսայի, իսկ կինն՝ առաջագարջի), վեց հոգի կը բաղկանայ: Մայրենի լեզուն պահած ենք տան մէջ:



Ելիգապէթվի մէջ կը գտնուի երուանդ Գրիգորեան: Շարվիլի մէջ կայ հայ բժիշկ մը: Սթանլիվիլի մէջ Մատթէո Մարկոսեան (ամուսին): Ուրիշ զանազան քաղաքներու մէջ ցանցառ թիւով հայեր կան: Յոյները մեծամասնութիւն կը կազմեն, եւ յունարեան կը գործածուի ամեն տեղ: Արտաձում - Երաձումը հրեաներուն, ինչպէս նաեւ անգլիացիներուն «Սէտեր» ընկերութեան ձեռքն է: Գլխաւոր արտադրութիւնն է ընտիր տեսակի սուրճը «Արապիկա»: Օղբ շատ լաւ է:

ԱՅՍՈՐ 7 ՅՈՒՆԻՍԻՆ

■1977.- Մահ Էրանդ Սամուելի:

■1982.- Շ. Ա. Մարտիկները կ'ահաբեկեն Լիզպոնի թրքական դեսպանատան վարչական կցորդներէն Էրբուք Աբալան ու կինը:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Ն



ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈՒՆ ԱՒԱՐՏԱԿԱՆ

ՍԱԺԷՍ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ՝ ԱԽՈՅԵԱՆ

Լիբանանի պասքեթպոլի տղոց ամառական մրցումին հինգերորդ է վերջին ճակատումին, որ տեղի ունեցավ Երեկ երեկոյան Ֆուտա Շեհապ մարզադաշտին վրայ, լիբանանեան պասքեթպոլը ապրեցավ իր սեւ օրերէն մէկը, երբ «ողբերգական» այս մրցումը ոչ թէ կիսատ մնաց, այլ՝ տեղի ունեցավ կոնի երկու խումբերուն՝ Սաժէսի եւ Ռիատիի մարզիկներուն միջեւ:

Առաջին քրթորէն 41 երկվայրկեան առաջ տեղի ունեցած կռիւն պատճառով մրցումը անելի քան մէկ ժամ ընդհատուեցաւ, երբ Սաժէս 29-14 արդիւնքով կը յառաջանար: Մրցումը հապի վերսկսած, մէկ երկվայրկեան ետք Ռիատիի մարզիկները քաշուեցան մրցումէն, ինչ որ պատճառ դարձաւ Սաժէսի ախոյեան հանդիսանալուն՝ եօթներորդ անգամ ըլլալով (յաջորդաբար՝ վեցերորդ տարին ըլլալով):

Թէեւ Սաժէս այսպիսով 3-2 արդիւնքով յաղթական դուրս եկաւ՝ Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնին որոշումով, սակայն պէտք է ընդունին այն իրականութիւնը, որ երեկուան միակ պարտուողը եղաւ լիբանանեան պասքեթպոլը եւ ոչ թէ՛ Ռիատին:

ԼԵՎԱՍ

Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՄԻ 2002 - 2003 տարեշրջանի մրցումները արդէն իսկ հասած են իրենց ամառին, նկատի ունենալով, որ վաղը՝ Կիրակի, 8 Յունիսին «Աղբալեան» - Հ.Մ.Ը.Մ. մարզական մրցումներին համալիրի «Ատոմ եւ Սելլա Թնճուկեան» մարզադաշտին մէջ տեղի պիտի ունենան պասքեթպոլի ամառական հանգրուանի մրցումները (յայտագիրը տեսնել ստորեւ):

Նշենք, թէ նոյն օրը տեղի պիտի ունենայ նաեւ (այդ մրցումներէն ետք) մրցանակաբաշխում: Բրոս - քաունթրիի, ճատրակի, փինկ - փոնկի, ֆուտպոլի, մինի ֆուտպոլի եւ պասքեթպոլի մրցումներուն ախոյեան հանդիսացած աշակերտները իրենց մետալները եւ բաժակները պիտի ստանան երեկոյան ժամը 7:00ին:

Թէեւ Կիրակի օր տեղի պիտի ունենայ մրցանակաբաշխում, սակայն բոլոր վարժարաններու աշակերտները տակաւին պարտականութիւն մը ունին կատարելիք. մասնակցիլ Մայիսեան փառատօնին, որ այս տարի բացառաբար տեղի պիտի ունենայ քիչ մը ուշ՝ Կիրակի, 22 Յունիսին:

ՍՏՈՐԵՒԻ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը:

● ՇԱՐԱԹ, 7 ՅՈՒՆԻՍ (3րդ, 4րդ դիրքի մրցումներ)

1:30 մեծ տղաք Ս. Հոնփսիմեանց - Լ. եւ Ս. Յակոբեան

2:30 միջ. տղաք Ս. Խանամիրեան - Ս. Հոնփսիմեանց

3:30 միջ. աղջիկներ Ս. Խանամիրեան - Մերոպեան

● ԿԻՐԱԿԻ, 8 ՅՈՒՆԻՍ (Ամառականի մրցումներ)

1:30 միջ. աղջիկներ Ճեմարան - Ս. Հոնփսիմեանց

2:30 միջ. տղաք Ճեմարան - Մերոպեան

4:00 մեծ աղջիկներ Ս. Հոնփսիմեանց - Ճեմարան


5:30 մեծ տղաք Կ. Բ. Վ. - Մերոպեան

ՍԻՄԸՆ ԱՐՍԵՆԱԼԷՆ ՄԻԱՑԱԻ ՍԻԹԻԻ

Անգլիացի վերջերան բերդապահ Տէյվիտ Սիմըն վերջ դրաւ Արսենալի հետ իր 13 տարեան ասպարէզին, երբ միացաւ Մանչեսթըր Սիթիի, մէկ տարուան պայմանագրութիւն մը ստորագրելով անոր հետ:

Արդէն իսկ 39 տարեկան Սիմընի «բաժանումը» կ'ակընկալուէր, նկատի ունենալով, որ Արսենալի մարզիչ Արսեն Վենկերը արդէն իսկ անոր ըսած էր, որ 2003-2004 եղանակին պիտի չըլլայ խումբին հիմնական բերդապահը, ինչ որ բնականաբար ուրախ լուր մը չէր Սիմընի համար, որ լաւագոյն առիթը ներկայացած ըլլալով, փոխանցուեցաւ եւ միացաւ իր նախկին մարզիչին՝ Քեփին Քիլքընի խումբին: Քիլքըն եւ Սիմըն իրարու հետ աշխատակցած են, երբ մաս կը կապէին Անգլիոյ ֆուտպոլի ազգային խումբին, մէկը իբրեւ մարզիչ, իսկ միւսը՝ իբրեւ մարզիկ:

Վենկերի յայտարարութիւնը լինելով, Մանչեսթըր Սիթիի առաջնութեան շարքին զինքն Սիմընի, որովհետեւ անիկա արդէն իսկ դանիացի բերդապահ Փիլթըր Շմայթլը փոխարինող մը կը փնտռէր:



Արսենալի հետ Անգլիոյ բաժակի տիրացած Տէյվիտ Սիմըն

ԵՒՐՕ - 2004Ի ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

ԱՅՍՕՐ՝ ՈՒՔՐԱՆԻԱ - ՇԱՅԱՍՏԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Եւրո - 2004ի ֆուտպոլի մրցաշարքին, այսօր եւրոպական դաշտերուն վրայ տեղի կ'ունենան վտումի 19 մրցումներ, որոնցմէ ոմանք անկասկած որ պիտի ըլլան բաւական տաք եւ հետաքրքրական ճակատումներ:

Հակառակ անոր որ վտումի մրցումներուն իրենց մասնակցութիւնը կը բերեն իսուն խումբեր, սակայն այսօր 38 խումբեր մրցումներ ունին կատարելիք, մինչ մնացեալ 12ը հանգիստի մէջ պիտի ըլլան:

Հանգիստի մէջ եղող խումբերուն շարքին են. Ֆրանսա, Անգլիա, Խրուաթիա, Իտալիա եւ ուրիշներ: Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը (Չ. Խմբակ) Լվովի մէջ քիչ մը դժուար մրցում մը ունի կատարելիք երբ հիւրը ըլլայ Ուքրանիոյ:

Երթին եւ մրցաշարքին իր կատարած առաջին մրցումին, Հայաստան վտումի իր առաջին կէտը յաջողեցաւ հաւաքել, երբ իր դաշտին վրայ 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Ուքրանիոյ հետ:

Այժմ խմբակին չորրորդ դիրքը գրաւող Հայաստան, որ իր կատարած չորս մրցումներէն կրցած է չորս կէտ հաւաքել, արձանագրած է մէկ յաղթանակ, մէկ հաւասարութիւն եւ կրած՝ երկու պարտութիւն: Անիկա իր երկու պարտութիւնները կրած է Յունաստանէն եւ Սպանիայէն, մինչ իր առաջին յաղթանակը արձանագրած է Հիւսիսային Իրլանտայի դէմ:

Յաղթանակ մը եւս

ՄՈՆԱԲՈՅԻ
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ՝
ՅԱՌԱՋԻԿԱՅ
ՅՈՒՆԻՍ 18ԻՆ

Անցեալ շաբաթ Ֆրանսայի ֆուտպոլի ֆետերասիոնին կողմէ Բ. դասակարգ փոխադրուած Մոնաքո միակ էր յառաջիկայ Յունիս 18 (եւ ոչ թէ միակ էր Յունիս 11) յայնմամբամ ունի իր դասը դաշտային իր համար, այլապէս անիկա կը փոխադրուէր Բ. դասակարգ միութեան գեղծարարութիւններու յայտնաբերումը:

Ըստ դաշտօճական աղբիւրներու, իշխանապետական կազմին յայտնաբերող 53 միլիոն եւրո եւ (62 միլիոն ամերիկեան փոլար), քան իր ակումբին համաձայն, այդ մէկը կը գնահատուի 80 միլիոն եւրոյով:

ԿՈՒՉՈՒԻՆ

● Ոսկերիչ (սետեթր) վարպետներ: Դիմել՝ հեռ. 01-242549:

արձանագրելու պարագային, Հայաստան յոյս ունի գրաւելու խմբակին երկրորդ դիրքը, այն պայմանով սակայն, որ Յունաստան պարտութիւն մը կրէ Սպանիայէն:

Վերոնշեալ մրցումէն բացի Հայաստան տակաւին երեք մրցում ունի կատարելիք, յաջորդաբար Յունաստանի (6 Սեպտեմբերին), Հիւսիսային Իրլանտայի (10 Սեպտեմբերին) եւ Սպանիոյ դէմ (11 Նոյեմբերին): Հակառակ անոր որ յառաջիկայ Չորեքշաբթի, 11 Յունիսին տեղի պիտի ունենան վտումի բազմաթիւ մրցումներ, սակայն Հայաստանի ֆուտպոլի ազգային խումբը

Ստորեւ՝ այսօրուան 19 մրցումներուն ամբողջական յայտագիրը (փակագիծին մէջ նշուած են մրցումներուն տեղի ունենալիք վայրերը):

- Ա. ԽՄԲԱԿ
Իսրայէլ - Սլովենիա (Անթալիա)
Մալթա - Կիպրոս (Թա - քալի)
- Բ. ԽՄԲԱԿ
Դանիա - Նորվեկիա (Քոփենհակըն)
Ռումանիա - Պոնտիա (Քրայովա)
- Գ. ԽՄԲԱԿ
Մոլդովիա - Աւստրիա (Թիրասպոլ)
Պիլիպիններ - Հոլանտա (Միսսպ)
- Դ. ԽՄԲԱԿ
Հունգարիա - Լաթվիա (Պուտայիէթ)
Սան Մարինո - Շուէտ (Սերրավալ)
- Ե. ԽՄԲԱԿ
Սլովակիա - Գերմանիա (Կլաւսո)
Իսլանտա - Ֆարո Կղզիներ (Ռեյքիաւիք)
- Զ. ԽՄԲԱԿ
Սպանիա - Յունաստան (Սարակոսա)
Ուքրանիա - ՀԱՅԱՍՏԱՆ (Լվով)
- Ը. ԽՄԲԱԿ
Սլովաքիա - Թուրքիա (Պրաթիսլաւա)
Մակեդոնիա - Լիխտենշտայն (Սքոփիէ)
- Ը. ԽՄԲԱԿ
Պուլկարիա - Պելճիքա (Սոֆիա)
Էսթոնիա - Աստորիա (Թալին)
- Թ. ԽՄԲԱԿ
Ֆինլանտա - Սերպիա (Հելսինքի)
- Ժ. ԽՄԲԱԿ
Չեխիերիա - Ռուսիա (Պալ)
Այիր - Ալպանիա (Տալին)

ՄԱՆՉԻՆԻ ԿԸ ՄՏԱԴՐԷ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԻՆԳ ՏԱՐԻՈՎ ԵՐԿԱՐԱԶԳԵԼ




Մանչիցի

Լացիո Ռոմայի պատասխանատուները յայտնեցին, թէ ակումբին մարզիչ Ռուպերթո Մանչիչի շատ հաւանաբար հինգ տարուան նոր պայմանագրութիւն մը ստորագրէ իր ակումբին հետ, ինչ որ կը նշանակէ, թէ ան մինչեւ 2008 թուականը պիտի մնայ Հոնմի խումբին հետ:

Կը նախատեսուի, որ 38 տարեկան իտալացի միջազգային նախկին մարզիկ՝ Մանչիչի, իրաքանչիւր տարուան համար Լացիո Ռոմայէն գանձէ 2,5 միլիոն եւրո (2,9 միլիոն ամերիկեան տոլար):

ՌՈՒԼԱՆ ԿԱՐՈՍԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐՔ


ՎԵՐՔԷՐԸ ԵՒ ՖԵՐԵՐՈ ՀԱՍԱՆ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ



Մարթին Վերքերը

Ռոլան Կարոսի կրան շլէմի միջազգային մրցաշարքին տղոց կիսամաքական հանգրուանի մրցումներուն, որոնք տեղի ունեցան Երեկ, 24 տարեկան հոլանտացի Մարթին Վերքերը (դասում՝ 46րդ) մրցաշարքին ամէնէն մեծագոյն անակնկալը ստեղծեց, երբ մրցաշարքէն դուրս ձգեց 7րդ դասուած արժանութիւնի Կիլերմօ Քորիան: Ան երկու ժամ եւ 40 վայրկեանի ընթացքին պարտութեան մատնեց 21 տարեկան Քորիան (որուն ծածկանունն էլ Մակօ), արձանագրելով 7-6, 6-6 եւ 7-6 արդիւնք մը, առանց առիթ տալու իր մրցակիցին, որ նոյնիսկ մէք մը շահի:

1,91 մ. հասակ ունեցող Վերքերը այսպիսով լաւագոյն առիթ ունի դառնալու երկրորդ հոլանտացի, որ թենիսի պատմութեան մէջ կրան շլէմի տիտղոսի մը պիտի տիրանայ Ռիչըրտ Քրայէթէնէն ետք, որ 1996ին շահեցաւ Ուիմպլըյտընի



Ռուան Զարլոս Ֆերերօ

կրան շլէմի մրցաշարքը: 89 քկ. կշռող Վերքերը, որ 1996ին դարձաւ արհեստավարժ թենիսիստ, ցարդ իր ասպարէզին ընթացքին կրցած է շահիլ 431,820 ամերիկեան տոլարի գումար մը: Ան ցարդ կրցած է միայն մէկ տիտղոսի տիրանալ, այդ ալ անցեալ Փետրուարին՝ Միլանոյի մէջ (Ռոտայիա):

Վերքերը, կը դառնայ երրորդ հոլանտացի, որ կրան շլէմի մրցաշարքի մը ամառականին կը հասնի (Թոմ Օքթերէնէն ետք, 1968ին, Եու. Էս. Օփըն), վաղը՝ Կիրակի ամառականին պիտի ճակատի 3րդ դասուած սպանացի Խուան Քարլոս Ֆերերոյ դէմ, որ իր կարգին ապահովեց ամառականին իր տոմար 6-3, 7-6 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց իր ակումբին հետ շատ գումար տարուան տիտղոսակիր՝ Ալպեր Քոսթան (դասում՝ 9րդ):

23 տարեկան Ֆերերօ ոչ միայն ապահովեց ամառական մրցումին իր տոմար, այլեւ անցեալ տարուան իր մարզական վրէժը լուծեց նոյնիսկ Քոսթայէն (27 տարեկան), երբ այս նոյն մրցաշարքին ամառականին պարտուած էր անկէ:

72 քկ. կշռող եւ 1,80 մ. հասակ ունեցող Ֆերերօ, որ 1998ին դարձաւ արհեստավարժ թենիսիստ, յաջողած է Վերքերէնէն անիկ շատ տիտղոսներու տիրանալ (9), առանց սակայն կարենալ կրան շլէմի մը տիտղոսին տիրանալ: Ան նոյնիսկ կրցած է իր ասպարէզին ընթացքին անիկ շատ գումար շահիլ, քան՝ հոլանտացի: Ֆերերօ ցարդ շահած է 6,736,911 ամերիկեան տոլարի գումար մը:

Նշենք, թէ այսօր տեղի կ'ունենայ աղջկանց ամառական մրցումը, որ պիտի ըլլայ վուտ սպանական ժիւսթին Հեննի եւ Քիմ Բիլթթրօպի միջեւ:

ՌՈՒՄԻՈՅ ՏՈՒՄԱՆ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐԸՅ ՉԵՉԵՆ ԿԱՐԳ ՄԸ ԶԻՆԵԱԼՆԵՐՈՒ

ՄՈՍԿՈՒԱ, 6 (ԱՅՓ).- Ռուսիայի խորհրդարանը՝ Տուման, Ուրբաթ օրը ներում չնորհեց Չեչենիոյ մէջ պատերազմող կարգ մը զինուորականներու եւ դաշնակցային ուժերու, քայլ մը, որուն նպատակը խաղաղութեան առիթ տայ էր, սակայն որ կու գայ անջատողական հանրապետութեան մէջ անձնասպանական արհեստի շարք մը գործողութիւններէ ետք:

Նախագահ Վլատիմիր Փութին յոյս դրած է ներումի այդ քայլին վրայ, վայն միջոց մը նկատելով՝ դուրս գալու պիտուրական արշաւէ մը, որուն ձեռնարկած էր Հոկտեմբեր 1999ին իբրեւ վարչապետ: Կրեմլին քրէտարկութեան քանի մը վայրկեան ետք որոշումը ողջունած է: Չեչենիոյ հարցե-

րուն գծով Փութինի բարձրատիճան խորհրդական Սերգէյ Եասթրովսկիի յայտնած է, թէ խորհրդարանին որոշումը կ'ընդգծէ «այն տուեալը, թէ տագնապին քաղաքական լուծման գործընթացը անդառնալի է»:

Պետական Տուման 25ի դէմ 352 քուէներով որդեգրած է ներումի վերաբերեալ բանաձեւը:

Միայն ապտակայն ընդդիմադիր Եապլոնքո հատուածը եւ ծայրայեղ ազգայնական էլ. Տի. Փի. Ար. խմբակը՝ Վլատիմիր ժիրի-նովսկիի ղեկավարութեամբ, ընդդիմացած են անոր:

Եապլոնքոյի պատասխանատուներն Սերգէյ Միքոնիսին ըսած է, թէ ներումը կրեմլինի կողմէ խաղ մըն է, որ գրեթէ ոչինչ

պիտի իրագործէ, նկատի ունենալով, որ երկու կողմերը բանակցութեանց սեղանին մօտենալու իսկ չեն սկսած՝ պատերազմին իսկապէս քաղաքական լուծում մը գտնելու համար:

Ժիրինովսկիներումը «ամօթալի» եւ «մեր պիտուրներուն յիշատակին համար ոճիր մը» կոչած է:

Ներումի իրաւունք ունին չեչեն ըմբոստները, սակայն ոչ արաբ վարձականները: Որոշումը ի պօրու պիտի դառնայ 7 օրէն:

Սակայն շատ փոքր է թիւը այն դէտերուն, որոնք կը հաւատան, թէ չեչեններ անձնատուր պիտի ըլլան մեծ թիւերով, նկատի ունենալով, որ ռուսական ատեանները պէտք է որոշեն, թէ ներումը պէ՞տք է գործադրուի: Միւս կողմէ, ծանրակրճի ոճիրներ գործած պիտեաններու չի վերաբերիր անիկա:

Մինչ այդ, մարդկային իրաւանց խմբակներ չափապանց պայրացած են, որ օրինագիծը կը պաշտպանէ նաեւ ռուս պիտուրներ, որոնք ամբաստանուած են Չեչենիոյ մէջ քաղաքայիններու դէմ բազմաթիւ բռնաբարումներ կատարած ըլլալու յանցանքով:

«Ըմբոստի Ինթըրնէ-շընըլ» յայտնած է, թէ ներումը միջազգային օրէնքները կը խախ-

տէ: Անիկա քրէտարկութեան է առաջ կոչ ուղղած է խորհրդարանին, որ վէթօ դնէ միջոցառումին դէմ:

«Ներումը կրնայ կամայականօրէն կիրարկուիլ, կրնայ խտրականութիւն դնել եւ հետեւաբար կրնայ չպատժել ծանրակրճ ոճիրներ գործած անձեր», ըսած է խմբակը:

Անիկա աւելցուցած է, թէ նման միջոցառում մը «արգիւտած է միջազգային օրէնքին կողմէ»:

Խորհրդարանը Դեկտեմբեր 1999ին նման ներում մը որդեգրած էր՝ պատերազմի տաք օրերուն, սակայն անիկա չէր կրցած կատարել պիտեաններու արշաւը:



Փութին

արկածի մը հետեւանքով եղած է:

Տեղւոյն վրայ գտնուող քննիչներ յայտնած են, թէ 4 յարկանի շէնքին մէջ տեղի ունեցած պայթումին պատճառը հաւանաբար կապի պայթում մը եղած է:

ՉԵՉԵՆԻՈՅ ՄԵՎ ՇԵՆՔԻՆ ՄԵՉ 11 ՁՈՇ

Միւս կողմէ, ըստ տեղացի պաշտօնատարներու, երկ ատուտուն 11 հոգի մահացած է՝ անոնցմէ 9ը դէմ բազմաթիւ բռնաբարումներ կատարած ըլլալու յանցանքով:

ՖՐԱՆՍԱՅԻ ՄԵՉ, 11 ՄԵՊՏԵՄԲԵՐԻ ԳՐԻՅՈՎ

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄԸ ԵՒՍ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԱԾ

ՓՄԻԻՉ, 6 (ԱՅՓ).- Ֆրանսացի քննիչներ Ուրբաթ օրը հարցաքննած են երկու հոգի՝ մարտքի մը եւ գերմանացի մը, որոնք այս շաբաթ ձերբակալուած են «Քայտա»-ի հետ կապ ունեցող իսլամական ծայրայեղական խմբակի մը անդամակցութեան կասկածներով:

Քարիմ Սեհտի (34 տարեկան) Փարիզի «Շարի Տը Կոլ» օղակայանին մէջ ձերբակալուած է Կիրակի օր, մինչ կը տարանցէր ուղղուելով դէպի Հնդկաց ուղևորութիւն ֆրանսական Ռէյնիոն կղզին, ուր կը ծրագրէր քննել ահաբեկչական հաւանական յարձակումներու կարելիութիւնը, ըսած են արդարադատութեան մարտի պաշտօնատարներ:

Յաջորդ օրը, քրիսթիան Կանչցարքը (36 տարեկան), գերմանացի մը, որուն ծանօթ էր Սեհտի, նոյն օղակայանին մէջ ձերբակալուած է, յայտնած են անոնք:

ԼՈՍՏՈՒՄԻ ՄԵՉ

ՊԸՆ ԼԱՏԵՆ ԸՄԲԱՆԱԲԱՐ ՈՂՋ Է

Կ'ԸՍԵ ԱՖԳՆԻՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱԿ ԸՄԻՏՅ ՔԱՐԶԱՅ

Աֆղանիստանի նախագահ Համիդ Բարզայի, որ ետօրեայ այցելութեամբ կը գտնուի Լոնտոն, ՊԻ.ՊԻ. ՍԻ.Ի հետ հարցազրոյցի մը ընթացքին ըսաւ, որ «Քայտա»-ի ուղեղը՝ Ռուսամա Պըն Լատենի շատ հետանաբար ողջ է, սակայն անոր վայրը յայտնի չէ ոչ մէկուն:

Բարզայ կ'ըսէ նաեւ, որ անոր լուրջ վնասներ կան, որոնք հետեւ կրնայ նշանակել, թէ անոր գործողութիւն մը պատրաստելու ընթացքի մէջ է:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Շարունակուած 2րդ, էջԵԸ

Կար ոճին համար: Հանդիպումին քննարկուեցան նաեւ Լիբանան – Իրան երկկողմանի յարաբերութիւնները, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:

- ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ նախարար Ալի Հասան Խալիլ երեկ շեշտեց ժեպպիսի մէջ ծառայողներու արշաւի անհրաժեշտութիւնը, դիտել տալով նաեւ, որ շրջանի անտառներն ու ընդհանուր առմամբ բնութիւնը կարիքը ունին հոգատարութեան: Ան կոչ ուղղեց ամէն ջանք ի գործ դնելու՝ պահպանելու համար ժեպպիսի բնական հարստութիւնները:
- ՄՇԱԿՈՅԹԻ նախարար Դալի Արիտի երեկ իր կատարած յայտարարութիւններուն մէջ շեշտեց, որ խաղաղութեան գործադրութեան իսկական արգելքը Իսրայէլն է: Ան կոչ ուղղեց Շարմէլ Շէյխի եւ Աքապայի վեհաժողովներով շատ չորախանայ, դիտել տալով, որ խաղաղութեան ճամբու քարտէսը իր իսկութեան մէջ յարատեւութեան, գոյատեւումի ու պայքարի քարտէս է, որ կը գործադրուի Լիբանանի մէջ եւ որ շատ յստակ է լիբանանցիներուն ու բոլորին համար:
- ԱՌԵՒՏՈՒՐԻ եւ տնտեսութեան նախարար Մարուան Համատէ երեկ ընդունեց Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան ներկայացուցիչ Փաթրիք Ռընոն, որ Համատէի յայտնեց, թէ Պրիքսէլի մէջ ստորագրուած է Լիբանանի հետ գործակցութեան համաձայնագիրի ծրագիրին 12 միլիոն եւրօ շնորհելու համաձայնագիր մը:
- ԿՐԹՈՒԹԵԱՆ եւ բարձրագոյն ուսման նախարար Սամիր ժալը երեկ Լիբանանի մէջ Իտալիոյ դեսպան Ֆրանչո Միտթերայի հետ քննարկեց երկկողմանի յարաբերութիւնները, յատկապէս կրթութեան մարզին ներս գործակցութեան ամրապնդման կարելիութիւնը:
- ՅԱՄԱԲԱՅԻՆ փոխարարութեան ինքնաշարժներու վարորդներու սնտիքներու համադաշնակցութիւնը երեկ յայտնեց, որ վարորդներուն գործ ապահովող միակ լուծումը մազութի գործածութեան արտօնութիւնն է, հիմնուելով կենսոլորտի նախարար Ֆարէս Պուէյպի այն յայտարարութեան վրայ, թէ պէտք է ներածել կանաչ մազութ եւ արգիլել կարմիր մազութը, որ կ'ապականէ կենսոլորտը եւ վնաս կը հասցնէ քաղաքացիներու առողջութեան:

ԿԱՅՐԱԳՈՒԹԵԱՆ ԱԼԻՔ ԱՆԳԱՄ ՄԸ ԵՒՍ...

Շարունակուած Ա. էջԵԸ

Համասի ղեկավարներէն՝ Ապտէլպազի Ռանթիսի ըսաւ, որ Ապու Մազէն (Մահմուտ Ապպաս) չի ներկայացներ պիտեք եւ թէ Համաս կը մերժէ տեսակցութիւն ունենալ վարչապետին հետ, որովհետեւ այդ հանդիպումները անիկա անտես են ու ապարդիւն: Ռանթիսի աւելցուց, որ որդեգրելով վտանգաւոր յանձնարարութիւններ, գործ կը մերժէ պաղեստինցի ժողովուրդը, Ապու Մազէն պահանջներու հիմնը: Ան ըսաւ նաեւ, որ Աքապայի վեհաժողովը պատերազմ հռչակեց պաղեստինցի ժողովուրդին դէմ եւ թէ Ապպասի կառավարութիւնը ոչինչ կ'ընէ պաղեստինցիներուն իրաւունքները պաշտպանելու համար: Համասի ղեկավարը քննադատեց Ապու Մազէնը, դիտել տալով, որ ան տեղի տուած է Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի պահանջներուն դիմաց՝ վիջելով պաղեստինեան պատմական իրաւունքները, վր պատերազմ հռչակեց՝ Երուսաղէմի, պաղեստինցի գաղթականներու եւ բանտարկեալներուն առնչուող:

Իսլամական ժիհադ իր կարգին երկ պահանջեց, որ Մահմուտ Ապպաս երկխօսութիւն կատարէ պաղեստինեան արմատական բոլոր շարժումներուն հետ: Շարժումի ղեկավար Մահմադ Զինտի ըսաւ, որ Ապու Մազէն պէտք է բացատրէ, թէ ինչու կը դատապարտէ Իսլամական ղեմ զինուորական զորքերը եւ ինչու Աքապայի վեհաժողովին արտասանած իր խօսքին մէջ որեւէ ակնարկութիւն չկատարեց իսրայէլեան գրաւման:

Պաղեստինեան արմատական շարժում մը պիտի ունենայ Շարոնի հետ, խորհրդակցելու համար որդեգրուելիք միջոցառումներուն մասին:

(ԱՅՓ)

FUEL CARD

գործածեցէք

Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւրը փոխելու կամ զանոնք լուալու պարագային:

Երբ մազութ պիտի գնէք, գործածեցէք FUEL CARD՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՍՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Ֆամուս
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»-ի մօտ
- ▶ SPEED - Ֆանքաշ, Կալէրի Իթքիատ
- ▶ ԳՅՅԱՄԱՆ ԿՅՅԱՄԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Ամթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Ֆարթ Ղաուարնէ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցու մօտ
- ▶ SAAD - Մար Միայել
- ▶ SPEED - Նաիր, «Փեօօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքի
- ▶ MALLAH - Պապալտէ